

2008թ. մարտ ամսին կապիտալի արտահոսքը ԱՄՆ-ում կազմեց 48.2 մլրդ ԱՄՆ դոլար

Արմինե Հակոբյան, «Գլոբալ Էս-Փի-Սի» գլխավոր տնօրեն

Ամերիկյան JP Morgan Chase & Co. ներդրումային բանկը պետք է ծախսի 9 մլրդ ԱՄՆ դոլար նախատեսված 6 մլրդ-ի փոխարեն իրեն կողմից ձեռքբերված և ներկայումս հիփոթեքային ճգնաժամի գլխավոր «գոհ» հանդիսացող Bear Stearns բանկը փրկելու համար:

Բացի այդ, JP Morgan-ը կարող է աշխատանքից ազատել մինչև 4 հազար իր մասնագետներին, որոնց մի մասը կփոխարինեն նույն Bear Stearns-ի աշխատակիցները:

65 տարի առաջ հիմնադրված Bear Stearns-ը դարձավ նախորդ տարի ամռանը ԱՄՆ-ում թափ առած հիփոթեքային ճգնաժամի առաջին զոհերից: Բանկի իրացվելիության պակասուրդի մասին տեղեկատվությունը բերեց մոտ 17 մլրդ ԱՄՆ դոլարի ակտիվների արտահոսքի և երկու հեջինգային ֆոնդերի սնկացմանը:

ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը (ԴԴՅ) անհրաժեշտ գտավ փրկելու Bear Stearns-ը: Այս նպատակով Բեն Բերնանկեի ղեկավարած գերատեսչությունը հավանություն տվեց կործանված բանկի ձեռքբերմանը մյուս ֆինանսական հսկայի՝ JP Morgan-ի կողմից:

Ներկայումս JP Morgan-ը պատրաստել է Bear Stearns-ի վերակենդանացման պլանը: Նախատեսված 9 մլրդ ԱՄՆ դոլարի ծախսը ներառում է կորուստների վերջին այն տվյալները, որոնք հաշվի չեն առնվել սկզբնական կանխատեսման սցենարով և կարող է աճել ևս առնվազն 1 մլրդ ԱՄՆ դոլարով:

Ներդրումային Berkshire Hathaway ընկերությունը ղեկավարող միլիարդատեր Ուորեն Բաֆֆեթի կարծիքով ԴԴՅ ճիշտ վարվեց կազմակերպելով JP Morgan-ի կողմից Bear Stearns-ի ձեռքբերումը. «Եթե կարգավորող գերատեսչությունը չհաստատեր Bear Stearns-ի սնանկությունը, ապա դրան կհաջորդեր սնկացման դեպքերի մի ամբողջ շղթա և խուճապի ուժեղացում: Առկա էին մտավախություններ, որ գործընթացը կստանար շղթայական բնույթ»:

Միաժամանակ, կապիտալի զուտ արտահոսքը ԱՄՆ-ում 2008թ. մարտ ամսին կազմեց 48.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ համեմատած նախորդ ամսվա 48.9 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսքի:

Այսպիսի տվյալներ է հրապարակել մայիսի 15-ին ԱՄՆ Ֆինանսների նախարարությունը: Մինչև այդ հարդորվել էր, որ 2008թ. փետրվարին նախնական տվյալներով կապիտալի զուտ ներհոսքը ԱՄՆ-ում կազմել է 64.1 մլրդ ԱՄՆ դոլար:

2008թ. մարտ ամսին արտասահմանցիները ձեռք են բերել 54.2 մլրդ ԱՄՆ դոլարի երկարաժամկետ ամերիկյան արժեթղթեր, փետրվարին՝ 49.6 մլրդ ԱՄՆ դոլարի:

Արտասահմանցիների կողմից ձեռքբերված կարճաժամկետ ամերիկյան արժեթղթերի և այլ դրամական պարտավորությունների գումարը կազմել է 13.5 մլրդ ԱՄՆ դոլար, նախորդ ամսվա 0.7 մլրդ ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ կապիտալի արտահոսքը, որը առաջացավ ամերիկյան և արտերկրյա բանկերին պատկանող դրամական պարտավորությունների տարբերությունից, 2008թ. մարտ ամսվա արդյունքներով կազմեց 115.9 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա գրանցված 0.1 մլրդ ԱՄՆ դոլարի ներհոսքի դիմաց:

